Է. ԱՆԵՆՔՆԵՐ ԵՎ ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

1. ԱՆԵՆՔ

1. Քոռնաս, կուրնաս, ափաիուավար դառնաս (մթան մեջ խարխափես)։
2. Քոռնա քու էրկու լուս. քոռնա ու մատուռ նստիս (մաղտուր-վնասված)։
3. Սևավոր, սև կապիս, սև թոֆան դա վրեդ (սև ջրհեղեղ)։
4. Էրթաս ու չդառնաս։
5. Քու հինէն քամուն տամ (չարժանանաս հարսանիքի հինային)։
6. Վարամ թալիս, վարամ թալուկ (թոքախտ ունենաս)։
7. Էրթաս սև անատակ (անհատակում կորչես)։
8. Կտրուկ արև, արևումեռ։
9. Քու պատանք կարիմ՝ տաս տակ թելով։
10. Նստիմ լենքդի, լամ յերկենքդի (դիակդ լամ)։
11. Ոտնակոտոր (ոտքդ կոտրի)։
12. Աչքախավար (աչքդ խավարի)։
13. Վղնա մանտա (վիզդ կոտրվի, տակը մնա)։
14. Աստծու բալբալական կրակ թափի վրեդ։
15. Դառ դատիս, մայրում (զրկված) նստիս։
16. Ուտիս ու փորեդ չէլնա (մեռնիս)։
17. Աստված քըզի բոր տա, ղղունգ չիտա։
18. Բեմուրատ մնաս։
19. Քու հոգու դռներ փակվի (դժվարությամբ հոդիդ տաս)։
20. Հոգեկորուս։
21. Բաբեն յելնա քու քիթ ու բերան։
22. Բթլեն ֆիշնա աչքերդի։
23. Սատանեն տանե քըզի։
24. Սատանեն քաշե զքու քիթ ու մռութ։
25. Գոդենաս, խռբիս, քրքրիս, հլմլիս, կողով ֆըլնան՝ չկանիս։
26. Տիրամոր զոդու յարևն յելնա քու քիթ ու մռութ։
27. Տիրամոր բրբող բրին թափի վրեդ։
28. Քու ամակ՝ քու բարձի տակ մնա։
29. Սև օձ դառնաս, պատեր քաշվիս։
30. Ջար ու զխում՝ ուտիս։
31. Խերիկ ու խերդին չէղնիս։
32. Իմ ծծի կաթ քըզի հարամ էղնի։
33. Կարմիր թումբան (վարտիք) չտեսնաս գլխուդ վերև (չամուսնանաս, կնոջ կարմիր վարտիք չտեսնես բարձիդ վերև)։
34. Իմ ձեռքի հաց բռնե քու էրկու լուս։
35. Աղուն ու աղջուր ուտիս։
36. Քու մուխ մոլրիս։
37. Շնոֆոր տանե զքըզի։
38. Գրող տանե զքըզի։
39. Շնոֆորի (գրողի) բրդում դնիմ բեբանդի։
40. Տրացավն առնե քու կող ու կուշտ։
41. Խառնախուսի (փորի ցավ ունենաս)։
42. Ջքռիս (չիք դառնաս)։
43. Ջոզրկիս (գնաս, կորչես անհետ)։
44. Քու մեկն էրկուս չէզնի (միշտ աղքատ մնաս)։
45. Շան ու գիլու փայ դառնաս։
46. Յոթ դարդի տիրանաս։
47. Թութ յելնա քու լեզուն։
48. Կերցավ ֆընկնի քու քիթ ու բերան։
49. Գոռբեգոռ էղնիս (գերեզմանից-գերեզման փոխադրվես)։
50. Կայենի կոտոշ հանիս։
51. Սատանի դաս դասակվիս։
52. Քու թողն ի Ուրֆա յելնա։
53. Ջորկոճ դառնաս[3]։

---

[1] Ջար—զեհիր՝ թույն. զխում՝ զաղգում—դժոխքի ծառ, որի պտուղը շատ դառն է (Ս. Բ.)։

[2] Անեծք, հայհոյանք, նախատական մի արտահայտություն անելուց հետո՝ ավելացնում էին. «Հը՛- հը՛- հընքսի՛ն», որ նշանակում է՝ թո՛ղ լինի (Ս. Բ.)։

2. ՕՐՀՆԱՆՔ ԵՎ ՄԱՂԹԱՆՔ

1. Ապրիս, կանչնաս, յերկին արև էղնիս։
2. Չոր քարին նստիս՝ կանաչ դառնա։
3. Աստծու բերանն օշե ղբրդի։
4. Աստված քրդի չար աչքից, չար համպոց, չար մարդուց հեռու պահե։
5. Բարով տեսնաս ղբու թաղն ու պսակ։
6. Տառ էղնիս ու ճուղ տաս։
7. Յոթն օրդով սեղան նստիս (յոթ որդի ունենաս)։
8. Քու մեկն հաղար էղնի։
9. Ջանսաղ էղնիս, ջիդրի մրմուռ չտեսնաս։
10. Աստված յերկին ձեռք չկարճրցու, նամարդին մուխթաճ չէղնիս։
11. Մեկ ձեռք՝ մեկ էլ ձեռաց մուխթաճ չեղնի։
12. Մեկ ցանիս, հաղար վերցուս։
13. Հայր Արրահամու սեղան էղնի քու սեղանը։
14. Քրիստոսի օշնեթք թափի վըր քու տան ու տեղին։
15. Լուս ճիրի վըր քու հոր, լուսու փայ էղնի։